ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՂԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՃԿՈՒՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.182

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում սահմանվում է «ճկուն հմտություն» հասկացությունը ծնողների հետ աշխատանքի համատեքստում: Բացահայտվում է «ֆասիլիտացիա և «ճկուն հմտություն» հասկացությունների բովանդակային և գործառական բնութագրերը դրանց միաժամանակ զարգացնելու տեսանկյունից: Ներկայացվում են նաև ծնողների հետ աշխատանքի տեսակները, նորագույն տեխնոլոգիաները դպրոցի ճկուն կառավարման համակարգում: Հիմնավորվում է ֆասիլիտացիա տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը ծնողների հետ աշխատանքի համակարգում:

Բանալի բառեր և արտահայտություններ. ֆասիլիտացիա, ճկուն հմտություն, ճանաչողական ունակություն, անձնային ունակություն, կարեկցանք, ծնողական ժողով, տնայց, վերառարկայական, համադպրոցական գիտաժողով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարման ճկուն հմտությունները, լինելով վերառարկայական, ձևավորվում են թե՛ դասարանային, թե՛ արտադասարանային աշխատանքի ժամանակ:

Հոդվածի նպատակն է ներկայացնել ծնողների հետ աշխատանքի դիդակտիկական համակարգը, որտեղ առաջին պլան են մղվում ֆասիլիտացիա տեխնոլոգիան, կառավարման ճկուն մեթոդները:

Ուսումնասիրվել է համապատասխան հոգեբանամանկավարժական գրականություն դպրոցի կառավարման համակարգում ծնողների հետ աշխատանքը ճկուն տեխնոլոգիաներով իրականացնելու համար:

Առաջարկվող տեխնոլոգիան կարող են կիրառել իրենց աշխատանքային պրակտիկայում դպրոցի տնօրենները, նրա տեղակալները, ուսուցիչները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տարբեր մոտեցումներ են շրջանառվում, երբ փորձ է արվում սահմանել «ճկուն հմտություն» հասկացությունը: Այն հիմնականում վերառարկայական հմտություն է համարվում և ենթադրում է, որ այն տիրապետող անձը շփվող է, ունի դրական մտածողություն, ճկուն է, ունակ է թիմային աշխատանքի **(Сорокопуд Ю., 2021)**:

Ուշադրության է արժանի Տ. Ա. Յարկովայի և Ի.Ի. Չերկասովայի մոտեցումը, ըստ որի՝ ճկուն հմտություններն ունեն երեք բաղադրիչ 1) ճանաչողական ունակություններ. սահմանափակ ժամանակում որոշումներ ընդունելու ունակություն, 2) գործունեություն ծավալելու ունակություն (առաջնորդի որակներ, կազմակերպչական ունակություններ, այլ մարդկանց հետ շփվելու ունակություն), 3) անձնային ունակությունները (հրապարակային ելույթ ունենալու ունակություն, աշխատել թիմում, հաղորդակցական ունակություններ, ժամանակի կառավարման հմտություններ) **(Яркова Т., 2016)**:

Նշված ունակություններից առանձնանում են հատկապես անձնային ունակությունները, երբ խոսքը վերաբերում է ծնողների հետ աշխատանքին: Ակնհայտ է, որ ծնողների հետ աշխատող տնօրենը, դասղեկը, ուսուցիչը պետք է կարողանա հնարավորինս ճանաչել նրանց, բացահայտել նրանց հոգեբանական բնութագրերը: Այդ առումով կարևորվում է հատկապես ֆասիլիտացիա տեխնոլոգիան, որը կիրառելու ընթացքում ուսուցիչը ծնողներին ճանաչելու

նպատակով անկեղծանում է, ազնվորեն ներկայացնում է իր մոտեցումները, իր անձային բնույթի խնդիրները: Կարևոր է, երբ անկեղծ մթնոլորտ ստեղծելու փուլին հաջորդում է ազատ մտքերը փոխանակելու փուլը: Միայն ազատ և անկաշկանդ մտքերի փոխանակումը կարող է ստեղծագործական փուլի սկիզբ հանդիսանալ:

Առաջին հայացքից թվում է, թե ծնողի հետ անկեղծ լինելն ավելի հեշտ է, քան աշակերտի հետ: Սակայն լինում են դեպքեր, երբ աշակերտի հետ լեզու գտնելն ավելի հեշտ է: Խնդիրն այն է, թե ուսուցիչն ի՛նչ աշխատանք է կատարում: Հիմնականում ծնողներն ավելի ազատ անակաշկանդ են արտահայտում իրենց մտքերը: Սակայն եթե երեխայի խնդիրները ինչ-որ առումով իրենց է վերաբերում, ապա դժվար է նրանցից ակնկալել անկեղծություն: Նույնը վերաբերում է Կ. Ռոջերսի կողմից առաջ քաշած վստահության սկզբունքին: Միշտ էլ դժվար է վստահության մթնոլորտ ստեղծելը: Հնարավոր չէ աջակցել ո՛չ աշակերտին, ո՛չ նրա ծնողին, եթե վստահություն ուսուցչի և ծնողի միջև չի ձևավորվում: Երրորդ սկզբունքը ըստ Կ. Ռոջերսի «կարեկցանքով հասկանալն» է: Շատ ուսուցիչների թվում է, թե իրենք պետք է կարեկցեն միայն աշակերտներին: Սակայն դա սխալ է: Ծնողին նույնպես կարելի օգնել, որ նա եղած խնդիրները հասկանա այլ տեսանկյուններից:

Արդեն նորույթ կամ գաղտնիք չէ, որ հնարավոր չէ պատկերացնել դպրոցի կառավարման համակարգը առանց ֆասիլիտացիա տեխնոլոգիայի կիրառման: Ընդ որում, ֆասիլիտացիան կառավարման ճկուն հմտություններ ձևավորելու կարևոր գործիք է: Այն թույլ է տալիս նոր տեսական, մեթոդաբանական դիրքերից դիտարկել դպրոցում կազմակերպվող ծնողների հետ աշխատանքը: Հայերենում ֆասիլիտացիան մանկավարժների կողմից թարգմանվում է որպես օժանդակում կամ աջակցում: Կարևոր է նշել, որ ֆասիտացիայի հիմնական սկզբունքները մշակվել են XX դարի 50-ական թթ. հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ Կ. Ռոջերսի կողմից:

Ակնհայտ է, որ հոգեթերապիայի համար նախատեսված ֆասիլիտացիայի սկզբունքները բուռ զարգացում են ապրել՝ ձեռք բերելով նոր բովանդակային և գործառական բնութագրեր հատկապես մանկավարժության շրջանակներում: Ուսուցիչ-օժանդակողի աշխատանքի վերջնական նպատակը պետք է լինի անկախության, ինքնատիպության ձգտող ծնողներին աջակցել երեխաների դաստիարակության և կրթության հետ կապված տարաբնույթ խնդիրները լուծելիս: Ինչպես նշում է այդ առումով Դավիդովան, «ծնող-ուսուցիչ հանդիպումների կազմակերպման ժամանակ հաջողությամբ կարելի է կիրառել ֆասիլիտացիա տեխնոլոգիան» **(Давыдова О., 2014):**

Ֆասիլիտացիա տեխնոլոգիան կարելի է կիրառել ծնողական ժողովների, ծնողների համար նախատեսված սեմինարների, թրեյնինգների, տարաբնույթ միջացառումների ժամանակ: Այդ առումով կարելի է առանձնացնել ծնողական ժողովը, որն իր գործառույթներով առավելապես աջակցող ուղղվածություն ունի: Ըստ Ա.Ա. Մաերի՝ ծնողական ժողովները կարելի է բաժանել 4 մասնաբաժնի.

1-ին մասնաբաժին՝ «Մենք նրանց...»: Այս կարգի հանդիպումները առաջնորդ են պահանջում: Ուսուցչը ծնողներին անհրաժեշտ հոգեբանական և մանկավարժական գիտելիքներով զինելու խնդիր է լուծում: Ծնողների հետ հադիպման ժամանակ ուսուցիչը ծնողների հետ քննարկումներ է կազմակերպում: Հարկ է նշել, որ նման հանդիպումների ժամանակ ուսուցիչը ոչ թե պարզապես տեղեկատվություն էր փոխանցում, այլև հանդես գալով որպես դաստիարակ, կազմակերպում էր համատեղ քննարկում՝ ամփոփելով առկա տեղեկատվությունը, օգտագործելով փոխազդեցության կազմակերպման ինտերակտիվ ձևերը:

2-րդ մասնաբաժին՝ «Մենք իրենց հետ ենք. այս մասնաբաժնում հանդիպումներ են կազմակերպվում ուսուցչի կողմից ծնողների հետ: Այդ հանդիպումները կարող են տեղի ունենալ կլոր սեղանների շուրջ, ստեղծագործական հյուրասենյակներում, մանկավարժական լաբորատորիաներում: Ծնողները ուսուցչի ղեկավարությամբ պատրաստում են

ելույթներ, առաջադրանքներ և խաղեր, որոնք թույլ են տալիս հանգիստ մթնոլորտում լուծել իրենց երեխաների կրթության արդի խնդիրները:

3-րդ մասնաբաժին՝ «Նրանք մեզ հետ են»: Այս բլոկի առանձնահատկությունն այն է, որ ծնողները ինքնուրույն որոշում են ծնող-ուսուցիչ հանդիպման թեման, ուսուցչի հետ քննարկում են լուսաբանման ենթակա խնդիրները, անցկացման հնարավոր ձևերը և մասնագետների ներկայության անհրաժեշտությունը: Հանդիպումն անցկացնում են ծնողկոմիտեի անդամները կամ քննարկվող թեմայով հետաքրքրված և իրավասու ծնողները:

4-րդ մասնաբաժին՝ «Նրանք առանց մեզ են…». ծնողները հանդիպումների այս մասնաբաժինն անցկացնում են ինքնուրույն՝ առանց ուսուցիչների մասնակցության, ամփոփում են արդյունքները, վերլուծում, թե ինչ է տեղի ունենում տարվա ընթացքում, ինչն է դրական, ինչը բացասական, ինչ արդյունքների են հասել մինչև տարեվերջ, ինչ դժվարությունների են հանդիպել տարվա ընթացքում և այլն **(Холодцова И., 2021)**:

Յուրաքանչյուր հանդիպումից առաջ ուսուցիչները հարցում են անցկացնում, որի նպատակն է բացահայտել ծնողների համար առավել հրատապ խնդիրները և բացահայտված խնդիրները քննարկելու մոտիվացիա ապահովել: Ծնողների նամակները և ուսուցիչների անձնական բլոգները ծնողներին թույլ էին տալիս բացահայտել քննարկման համար կարևոր թեմաներ, որտեղ ծնողները կարող էին իրենց հետաքրքրող հարցերը տալ: Կարևոր էր նաև արտացոլող թերթիկների օգտագործումը՝ հետադարձ կապ ապահովելու և ծնողներին մանկավարժական արտացոլման տարրերով զինելու համար:

Կարելի է պնդել, որ ֆասիլիտացիա տեխնոլոգիան նպատակահարմար է կիրառել թե՛ աշակերտների, թե՛ ծնողների հետ աշխատանքում: Ընդ որում, արդյունավետ է, երբ ծնողը ոչ միայն զգում է ուսուցչի աջակցությունը, այլև ինքն է սովորում աջակցել, այսինքն՝ ֆասիլիտացիա անել: Հասկանալով ֆասիլիտացիայի կարևորությունը՝ ծնողը սկսում է իր երեխայի հետ աշխատանքում կիրառել ճկուն հմտություններ: Օրինակ՝ նա երբեք չի ասի՝ ինչ

գնով էլ լինի պետք է սովորես: Շատ ծնողներ լավ չեն գիտակցում, որ միայն ակտիվ հանգստից հետո է արդյունավետ կատարել տնային աշխատանքը: Շատ ծնողներ չեն գիտակցում, որ կրտսեր դպրոցականները չպետք է առանց հանգստի, խաղալու սովորեն դասերը: Մանկավարժամեթոդական, բացատրական աշխատանքն ուսուցիչը պետք է իրականացնի ճկուն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Աշակերտների արագ առաջադիմություն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ֆասիլիտացիա տեխնոլոգիան կամ աջակցել նրանց՝ հաշվի առնելով նրանց ընտանեկան վիճակը, ծնողների հոգեբանական, մանկավարժական գիտելիքները, նրանց համագործակցելու կարողությունները: Ուսուցիչն անհրաժեշտ արդյունքի հասնելու համար պետք է կիրառի ճկուն հմտություններ թե՛ ծնողների, թե՛ երեխաների հետ աշխատանքում:

Մանկավարժահոգեբանական գրականության մեջ կիրառվում է «ուսուցման աջակցող տեսակ» եզրույթը, որը ենթադրում է, որ դասավանդողը պետք է լինի ֆասիլիտատոր: Ըստ այդմ, «ուսուցման աջակցող տեսակը կամ ֆասիլիտացիա իրականացնող դասավանդողը հնարավորություն է տալիս մշտապես գտնվել փոփոխությունների գործընթացում՝ փորձել, ստեղծել և գտնել ճկուն պատասխաններ այն հարցերին, որոնցով մտահոգված են ժամանակակից մանկավարժները» **(Психологическое консультирование … 1998)**:

Ակնհայտ է, որ հնարավոր չէ կիրառել ֆասիտացիայի տեխնոլոգիան առանց կիրառելու ճկուն հմտություններ: Երբեմն ճկուն հմտություններն անվանում են «մարդկային հմտություններ», որոնք անհրաժեշտ են կրթական գործընթացում այլ անձանց հետ համագործակցելու համար: Ուսուցիչը պետք է ունենա ոչ միայն մասնագիտական, այլև ճկուն հմտություններ: Հատկանշական է այն, որ որոշ ուսուցիչներ ծնողների հետ շփվելիս անընդհատ հիշեցնում են նրանց, որ իրենք հմուտ մասնագետներ են, որը և բավարար չէ հավուր պատշաճի ուսումնադաստիարակչական աշխատանք իրականացնելու համար: Կառավարման և ուսուցման ճկուն հմտությունները լինելով վերառարկայական,

անհրաժեշտ են ոչ միայն աշակերտների, այլև նրանց ծնողների հետ շփվելու համար:

Կարևոր դրույթ է այն, որ անհրաժեշտ է կիրառել ճկուն տեխնոլոգիաներ կառավարման և ուսուցման բոլոր մակարդակներում: Ընդ որում, արդյունավետ չի կարող լինել ճկուն տեխնոլոգիայի կիրառումը կառավարման մակարդակում, եթե այն չի կիրառվում ուսուցման գործընթացում: Ուսուցիչները պետք է կարողանան անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցել ծնողներին, որպեսզի միասին աշխատեն աշակերտների ձեռքբերումների վրա, մինչդեռ կարևոր է ապահովել, որ ծնողները հասկանան դասավանդման ժամանակակից սկզբունքներն ու տեխնոլոգիաները, ինչպես նաև իրենց երեխաների վարքի ձևերն ու խնդիրները:

Որպես ծնողների հետ կառուցողական շփման արդյունավետ միջոցներ կարող են առաջարկվել հետևյալը.

ա) ծնողների հետ անձնական հարաբերությունների հաստատում, ծնողական վստահության հաստատում և ամրապնդում (սա ծնողներին ապացուցելու մշտական գործընթաց է, որ ուսուցիչն անկեղծորեն հետաքրքրված է երեխաների կյանքով, մանավանդ որ տեխնոլոգիաների և հասանելի գործիքների զարգացմամբ՝ հեռախոսազանգեր, էլեկտրոնային տեղեկագրեր, էլեկտրոնային քարտեր, չաթի, վիդեոկոնֆերանսի հավելվածներ, ինչպես նաև սոցիալական ցանցային գործիքներ. խնդրի լուծումը դառնում է ավելի քիչ սթրեսային);

բ) փոխզիջում գտնելու համար ծնողներին լսել ոչ միայն նրանց հարցերն ու տարբեր տեսակի մտահոգությունները, այլև կրթական գործընթացից դժգոհությունը՝ փոխզիջում գտնելու համար (հատկապես եթե ծնողները սխալվում են).

գ) յուրաքանչյուր հաղորդակցության փաստաթղթավորումը (պարտադիր գաղտնիությամբ) թույլ է տալիս չկորցնել կարևոր տեղեկատվություն, վերլուծել և պլանավորել ուսումնական աշխատանքը սովորողների հետ և փոխգործակցությունը ծնողների հետ:

2. Խնդիրների լուծում՝ որպես առաջիկա խնդիրները հեշտությամբ կանխատեսելու և վերլուծելու և դրանք հաղթահարելու ստեղծագործ լուծումներ մշակելու կարողություն: Ներքին և արտաքին խնդիրները, որոնք առաջանում են ուսուցման գործընթացում, կարող են բացասաբար ազդել ուսուցման արդյունքների վրա: Օրինակ, երբ հակամարտությունը թուլացնում է կամ աշխատում է կյանքի խնդրի վրա, որը խանգարում է աշակերտի ուսմանը, ուսուցիչը պետք է պատրաստ լինի ընդունելու մարտահրավերը և իմանա իրավիճակը լուծելու լավագույն միջոցը: Խնդրի լուծման հմտությունները կարևոր են խնդիրը օբյեկտիվորեն քննարկելու համար. ուսումնասիրել խնդրի ազդեցությունը երեխաների և (կամ) դասախոսական կազմի և դրա արդյունավետության վրա. գտնել հնարավոր լուծումներ, մշակել լուծումների իրականացման ծրագրեր:

Ուսուցիչը պետք է կարողանա կիրառել ճկուն հմտություններ ծնողների հետ աշխատելու ցանկացած ձև կիրառելիս: Ծնողական հանդիպումների ժամանակ ուսուցիչը պետք է կարողանա չառանձնացնել այս կամ այն ծնողին, նրանց հետ շփվել առանց նրանց վիրավորելու, երեխաների անհաջողությունները շարունակաբար մատնանշելու: Ծնողը պետք է զգա ուսուցչի հոգատար վերաբերմունքը երեխաների տարբեր խնդիրներ քննարկելիս կամ լուծելիս:

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ հանրակրթական դպրոցներում համադասարանային և համադպրոցական գիտաժողովներ գրեթե չեն կազմակերպվում: Կազմակերպելու դեպքում ուսուցիչները հնարավորություն են ստանում զեկուցումներ պատրաստել ֆասիլիտացիա տեխնոլոգիայի, կառավարման ճկուն հմտությունների մասին: Նրանք պետք է հաշվի առնեն այն փաստը, որ շատ ծնողներ ունեն հոգեբանամանկավարժական կրթություն: Զեկուցումների թեման ընտրելիս նրանք պետք է թիրախավորեն մանկավարժական կրթություն չունեցող ծնողներին: Խնդիր է դրվում ապահովել նրանց համապատասխան հոգեբանամակավարժական գրականությամբ՝ հաշվի առնելով հատկապես համացանցի անսահմանափակ հնրավորությունները:

Ֆասիլիտացիա տեխնոլոգիան կիրառելու լայն հնարավորություն են ընձեռում հատկապես բաց դռների օրերը: Այստեղ կարևոր խնդիր է ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելը, որ հիմնականում պայմանավորված է ուսուցիչների պատրաստվածության աստիճանով: Դժվար է ժամանակակից ծնողին առաջարկել երեխայի ուսուցման և դաստիարակության հետ կապված հետաքրքիր թեմայով: Ուսուցիչը պետք է կարողանա կիրառել ոչ միայն կառավարման, ուսուցման ճկուն հնտություններ, այլև պետք է լինի մասնագիտականա առումով անհրաժեշտ մակարդակի պատրաստված:

Ծնողների մեծ մասը նախընտրում է ուսուցիչների անհատական խորհրդատվությունը: Նրանք հիմնականում նախապատվություն են տալիս այս կամ այն ուսուցչին: Երբեմն այդ նախապատվությունը չի բացատրվում տվյալ ուսուցչի մասնագիտական կարողունակություններով: Մեծ դեր է խաղում անձնական համակրանքը կամ երեխայի կարծիքը: Այս պարագայում նույնպես վճռորոշ է դառնում ֆասիլիտացիա տեխնոլոգիայի կիրառումը:

Տարածված է նաև ծնողների հետ աշխատանքի բավականին արդյունավետ ձևերից մեկը՝ տնայցը: Տնայցերը հիմնականում ուսուցչիները կատարում են, երբ երեխան ինչ-որ խնդիրներ է ունենում: Լավ կազմակերպված տնայցը հնարավոր չէ կատարել առանց ճկուն հմտություններ ունենալու:

Ե. Վ. Դեմիդովայի կողմից արված ծնողական ժողովներ անցկացնելու առաջարկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչը պետք է լինի ֆասիլիտատոր: Ե. Վ. Դեմիդովա գրում է.

«1. Ծնողական ժողովը պետք է դաստիարակի ծնողներին, այլ ոչ թե ասի երեխաների ուսման մեջ սխալներն ու անհաջողությունները:

2. Հանդիպման թեման պետք է հաշվի առնի երեխաների տարիքային առանձնահատկությունները:

3. Հանդիպումը պետք է կրի թե՛ տեսական, թե՛ գործնական բնույթ՝ իրավիճակների վերլուծություն, թրեյնինգներ, քննարկումներ և այլն:

4. Ժողովը չպետք է զբաղվի սովորողների անհատականության քննարկմամբ և դատապարտմամբ» **(Демидова Е., 2012):**

Սխալ է ասել, թե «ծնողական ժողովը պետք է դաստիարակի ծնողներին»: Ակնհայտ է, որ այստեղ խոսք է գնում ծնողներին դաստիրակելու մեթոդներով զինելու մասին: Դժվար պահանջ է հատկապես «իրավիճակների վերլուծություն, թրեյնինգներ, քննարկումներ» իրականացնելը: Դժվար չէ կռահել, որ ուսուցիչը պետք է ոչ միայն լավ մանկավարժ լինի, այլև ունենա այլ մարդկանց հետ աշխատելու, շփվելու ճկուն հմտություններ:

Նույնը վերաբերում է «սովորողների առաջադիմության, նրանց հնարավորությունների, ուսումնական գործունեության մեջ դասարանի առաջադիմության աստիճանի վերլուծությանը»: Շատ ուսուցիչներ հանդիպում են ծնողներին՝ նախ և առաջ երեխայի խնդիրները, թերացումները վեր հանելու համար: Ֆասիլիտացիա տեխնոլոգիայի կիրառումը ենթադրում է նախ և առաջ երեխայի դրական կողմերը, առաջադիմության հնարավորությունները ներկայացնելը: Նույն հեղինակն առաջարկում է չխոսել ծնողների հետ «գնահատականների, այլ գիտելիքների որակի և ինտելեկտուալ ջանքերի չափի մասին»: Նա նշում է. «Ծնողական ժողովի համար անհրաժեշտ է պատրաստել սովորողների ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսներ, ներկայացնել նրանց ձեռքբերումները, և ոչ միայն կրթական գործունեության մեջ» **(Демидова Е., 2012)**:

Ծնողական կոմիտեն մեծ դեր է խաղում ծնողների և դպրոցի միջև համագործակցության մեջ: Դպրոցական համայնքում տիրող մթնոլորտը, ծնողների փոխհարաբերությունները, մեծահասակների ու երեխաների շփումը կախված են նրանից, թե ծնողական հանձնաժողովը որքան ներդաշնակ և պատասխանատու է մոտենում իր գործունեությանը:

Ֆասիլիտացիա տեխնոլոգիան անհրաժեշտ է կիրառել հատկապես ծնողների հետ աշխատանքի ոչ ավանդական ձևերը կիրառելիս: Դրանք են

- թեմատիկ խորհրդատվությունները

- ծնողական դասախոսությունները
- ծնողական երեկոները
- ծնողների վերապատրաստումները
- ընտանեկան սպորտային միջոցառումները **(Демидова Е., 2012):**

Այս հմտությունը արդյունավետ ձևավորելու և (կամ) զարգացնելու համար ուսուցիչները պետք է ունենան քննադատական մտածողության, հետազոտության ներքին հակումներ, ինչպես նաև վճռականություն և հարցեր տալու պատրաստակամություն: Ուսուցիչների շրջանում այս հմտությունն ամրապնդելու լավագույն մեթոդներից մեկը խնդրի վրա հիմնված ուսուցումն է ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար:

3. Թվային տեխնոլոգիաների տիրապետում՝ որպես ժամանակակից տեխնոլոգիաներով կողմնորոշվելու կարողություն՝ հասնելու ոչ միայն մասնագիտական, այլև անձնական նպատակներին: Այս փափուկ հմտությունը հատկապես կարևոր է թվային դարաշրջանում, քանի որ այն օգնում է.

- ծրագրային ապահովման առավելագույն օգտագործում՝ արտադրողականությունը բարձրացնելու և ամենօրյա գործունեությունը օպտիմալացնելու համար,
- նպատակներին հասնելու համար ինչպես աշխատասեղանի, այնպես էլ ամպային տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործում,
- ինտերնետի օգտագործումը արտադրական և հետազոտական գործունեության, ինչպես նաև հաղորդակցության համար,
- կոնկրետ նպատակի համար օպտիմալ ծրագրային ապահովման ընտրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծնողների հետ աշխատանքում կիրառելով ֆասիլիտացիա տեխնոլոգիան, ուսուցիչը առաջնորդվում է հստակ սկզբունքներով: Կարևորվում են անկեղծության, վստահության, կարեկցանքով հասկանալու սկզբունքները: Ուսուցիչ-օժանդակողի աշխատանքի վերջնական նպատակը պետք է լինի

անկախության, ինքնատիպության ձգտող ծնողներին աջակցել երեխաների դաստիարակության և կրթության հետ կապված տարաբնույթ խնդիրները լուծելիս:

Ծնողների հետ աշխատանքը կարող է լինել արդյունավետ, երբ ծնողները ներգրավվում է ուսուցիչների կողմից կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների, սեմինարների, քննարկումների, անգամ գիտաժողովների: Աշխատանքի ավարտական փուլում ծնողները իրենք են կազմակերպում հանդիպումներ, մշակում երեխաների խնդիրների հետ կապված օրակարգեր, գնահատում ծնողական ժողովների աշխատանքի արդյունքները և այլն:

Ֆասիլիտացիա անելու կարևոր պայման է ուսուցիչների կողմից անցկացվող հարցումները, ծնողների թեստավորումը, այսինքն՝ այն ամենը, ինչը նպաստում է հետադարձ կապ հաստատելուն:

Արդյունավետ է, երբ ծնողը ոչ միայն զգում է ուսուցչի աջակցությունը, այլև ինքն է սովորում աջակցել, այսինքն՝ ֆասիլիտացիա անել:

Ուսուցիչն անհրաժեշտ արդյունքի հասնելու համար պետք է կիրառի ճկուն հմտություններ թե՛ ծնողների, թե՛ երեխաների հետ աշխատանքում:

Ուսուցիչները պետք է կարողանան անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցել ծնողներին, որպեսզի միասին աշխատեն աշակերտների ձեռքբերումների վրա: Նրանք պետք է հնարավորինս խուսափեն քննադատել, բացասական գնահատական տալ խնդիրներ ունեցող աշակերտներին:

Սկզբունքային նշանակություն ունի այն, որ ծնողները հասկանան դասավանդման ժամանակակից սկզբունքներն ու տեխնոլոգիաները, ինչպես նաև իրենց երեխաների վարքի ձևերն ու խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Давыдова О. (2014),** Как эффективно использовать технологии фасилитации на родительских собраниях в ДОО /О.И. Давыдова, А.А. Майер, Москва, Центр педагогического образования.

2. **Демидова Е. (2012),** Система работы классного руководителя с родителями учащихся, Классное руководство как исскуство//Эксперимент и инновации в школе, №6, с. 27-34.
3. **Ермаков Д. (2020),** Персонализированная модель образования: развитие гибких навыков /Д. С. Ермаков // Образовательная политика. №1 (81). — URL: https://cyberleninka.ru/article/n/personalizirovannaya-model-obrazo-vaniya-razvitie-gibkih-navykov.
4. **Психологическое консультирование и психотерапия (1998),** Хрестоматия. Т. 1. Теория и методология /Под редакцией А. Б. Фенько, Н. С. Игнатьевой, М. Ю. Локтаева, Москва, Московский психотерапевтический журнал.
5. **Сорокопуд Ю. (2021),** Soft skills («мягкие навыки») и их роль в подготовке современных специалистов /Ю. В. Соро-копуд, Е. Ю. Амчиславская, А. В. Ярославцева // Мир науки, культуры, образования. №1 (86). — URL: https://cyberleninka.ru/article/n/gibkost-myshleniya-kak-vostrebovannyy-myagkiy-navyk-soft-skills-sovremennyh-spet-sialistov/viewer (дата обращения: 15.03.2022).
6. **Холодцова И. (2022)**, Формирование и развитие «гибких» навыков в подготовке педагогов общеобразовательных учреждений // Инновационные проекты и программы в образовании. № 4 (82), с. 50-56.
7. **Яркова Т. (2016),** Формирование гибких навыков у студентов в условиях реализации профессионального стандарта педагога /Т. А. Яркова, И. И. Черкасова // Вестник Тюменского государственного университета. Гуманитарные исследования. Humanitates. Том 2, № 4, с. 222-234.

REFERENCES

1. **Davydova O. (2014),** Kak effektivno ispol'zovat' tekhnologii fasilitatsii na roditel'skikh sobraniyakh v DOO /How to effectively use technologies of

facilitation at parent meetings in preschool institutions/ / O.I. Davydova, A.A. Maye, Moscow, Center for Pedagogical Education.

2. **Demidova E. (2012),** Sistema raboty klassnogo rukovoditelya s roditelyami uchashchikhsya, Klassnoye rukovodstvo kak isskustvo /The system of classroom teacher's work with students' parents: classroom guidance as an art/. //Experiment and innovation at school, No. 6, pp. 27-34.
3. **Ermakov D. (2020),** Personalizirovannaya model' obrazovaniya: razvitiye gibkikh navykov /Personalized model of education: development of flexible skills/ / D. S. Ermakov //Educational policy. №1(81). — URL: https://cyberleninka.ru/article/n/personalizirovannaya-model-obrazo-vaniya-razvitie-gibkih-navykov.
4. **Psychological counseling and psychotherapy (1998),** Khrestomatiya. T. 1. Teoriya i metodologiya /A textbook. Vol. 1. Theory and methodology/ /Edited by A. B. Fenko, N. S. Ignatieva, M. Y. Loktaev, Moscow, Moscow Psychotherapeutic Journal.
5. **Sorokopud, Yu.V. (2021),** Soft skills («myagkiye navyki») i ikh rol' v podgotovke sovremennykh spetsialistov /Soft skills and their role in the training of modern specialists/ / Yu.V. Sorokopud, E. Y. Amchislavskaya, A.V. Yaroslavtseva // The world of science, culture and education, №1 (86). — URL: <url> https://cyberleninka.ru/article/n/gibkost-myshleniya-kak-vostrebovannyy-myagkiy-navyk-soft-skills-sovremennyh-spet-sialistov/viewer.
6. **Kholodtsova I. (2022),** Formirovaniye i razvitiye «gibkikh» navykov v podgotovke pedagogov obshcheobrazovatel'nykh uchrezhdeniy /Formation and development of "flexible" skills in the training of teachers of educational institutions/ // Innovative projects and programs in education. No. 4 (82), pp. 50-56.
7. **Yarkova T. (2016),** Formirovaniye gibkikh navykov u studentov v usloviyakh realizatsii professional'nogo standarta pedagoga /Formation of flexible skills

among students in the context of the implementation of the professional standard of a teacher/ /T. A. Yarkova, I. I. Cherkasova // Bulletin of the Tyumen State University. Humanitarian studies. Humanities., Vol. 2, No. 4, pp. 222-234.

Astghik Vardanyan

Flexible management skills in working with parents

Conclusion

Key words and expressions: *facilitation, soft skills, cognitive abilities, personal abilities, empathy, parent-teacher conference, home visiting, cross-curricular, school-wide conference.*

When using facilitation technology in working with parents, the teacher is guided by clear principles. The principles of sincerity, trust, understanding and compassion are emphasized. The ultimate goal of the work of a teacher-facilitator should be to support parents who strive for independence and originality in solving various problems related to the upbringing and education of children.

Working with parents can be effective when parents participate in various events, seminars, discussions and even conferences organized by teachers. At the final stage of work, parents themselves organize meetings, develop agendas related to children's problems, evaluate the results of parent-teacher meetings, etc.

An important condition for facilitation is surveys conducted by teachers, testing of parents, that is, everything that contributes to the establishment of feedback.

It is effective when the parent not only feels the support of the teacher, but also learns to support, that is, to facilitate.

To achieve the desired result, the teacher must use flexible skills in working with both parents and children.

Teachers must be able to provide parents with the information they need to collaborate on student achievement. They should avoid criticizing and negatively evaluating students with problems as much as possible.

It is fundamentally important that parents understand modern teaching principles and technologies, as well as the behavior patterns and problems of their children.

Астхик Варданян

Гибкие навыки управления в работе с родителями

Заключение

Ключевые слова и выражения: *фасилитация, гибкие навыки, познавательные способности, личные способности, сопереживание, родительское собрание, посещение на дому, надпредметный, общешкольная конференция.*

Применяя технологию фасилитации в работе с родителями, педагог руководствуется четкими принципами. Подчеркиваются принципы искренности, доверия, понимания и сострадания. Конечной целью работы педагога-фасилитатора должна быть поддержка родителей, стремящихся к самостоятельности и оригинальности в решении различных задач, связанных с воспитанием и обучением детей.

Работа с родителями может быть эффективной, когда родители участвуют в различных мероприятиях, семинарах, дискуссиях и даже конференциях, организуемых педагогами. На заключительном этапе работы родители сами организуют собрания, разрабатывают повестки дня, связанные с проблемами детей, оценивают результаты работы родительских собраний и т. д. Важным условием фасилитации являются опросы, проводимые педагогами, тестирование родителей, то есть все, что способствует установлению обратной связи.

Эффективно, когда родитель не только чувствует поддержку педагога, но и учится поддерживать, то есть делать фасилитацию.

Для достижения необходимого результата педагог должен использовать гибкие навыки работы как с родителями, так и с детьми.

Учителя должны иметь возможность передавать родителям необходимую информацию для совместной работы над успеваемостью учащихся. Им следует избегать критики и негативных оценок ученикам с проблемами, насколько это возможно.

Принципиально важно, чтобы родители понимали современные принципы и технологии обучения, а также модели поведения и проблемы своих детей.

ԱՍՏՂԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գյումրու թիվ 45 միջնակարգ դպրոցի տնօրեն, ՇՊՀ-ի Մանկավարժության տեսություն և պատմություն ամբիոնի հայցորդ: Համաձայն ՀՀ ԲԿԳԿ–ի մասնագիտությունների անվանացանկի՝ ունի տպագրված 6 հոդված: astvardanyan@mail.ru

ASTGHIK VARDANYAN - Headmaster of Gyumri Secondary School No. 45, candidate of the Department of Theory and History of the Shirak State University. Author of 6 articles. astvardanyan@mail.ru

АСТХИК ВАРДАНЯН - Директор гюмрийской средней школы № 45, соискатель кафедры теории и истории педагогики ШГУ. Автор 6 статей. astvardanyan@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 21.07.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.08.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ